

## **ՈՐՈՆՈՂԱԿԱՆ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇԱՎԱԼՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ**

**Մ. Գ. Ք., դոց. ԱՆՈՒՇ ԵՂՈՅԱՆ**

Հասարակական-տնտեսական նոր հարաբերությունները, բաց ժողովրդավարական հասարակությունն ու աշխարհի հետ բազմաճյուղ շփումներն այսօր կրթության առջև դնում են անձնային, սոցիալական-արժեքային համակարգ ունեցող մարդ ձևավորելու պահանջ:

Ակնհայտ է, որ հանրակրթության ծրագրերի իրականացման գործընթացը պիտի բավարարի ժամանակակից կյանքի պահանջները, համապատասխանի անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման պայմաններին և պահանջներին: Այսինքն՝ ուսումնական գործընթացում գիտելիքների և կարողությունների ձեռքբերման հարաճուն ձգտումը պետք է նպաստի, ծառայի անձի զարգացմանը: Այսօրվա աշակերտական նստարանին նստած աշակերտը՝ որպես ապագա հասարակության սոցիալականացված անձնավորություն, պիտի կարողանա այսօրվա սովորածը, ձեռք բերածը կիրառել նաև վաղը: Սակայն, ինչպես փորձն է ցույց տալիս, թե՛ հանրակրթության, թե՛ բուհական կրթության համակարգում սովորողներն ավել կամ պակաս չափով աշխատում են ձեռք բերել տարամակարդակ գիտելիքներ և կարողություններ, որոնցից շատերը, իրենց իսկ հավաստմամբ, հաճախ կյանքում պետք չեն գալիս: Կարելի է հանդիպել շատ մարդկանց, ովքեր զերազանց գնահատականներով սովորել են թե՛ դպրոցում, թե՛ բուհում, սակայն կյանքում այդպես էլ չեն գտել իրենց տեղը, որովհետև այն, ինչ նրանք սովորել են դպրոցում, մնացել է ուսումնական հաստատության պատերի ներսում, այսինքն՝ ուսումը մի բան է տվել նրանց, կյանքը մեկ այլ բան է պահանջում: Արդյո՞ք այս համատարած երևույթը, որը հազարավոր սովորողների կանգնեցնում է փակուղու առջև, հետևանք չէ այն բանի, որ ուսումնական գործընթացում որոշ ուսուցիչներ մեծ տեղ են տալիս սովորեցնելուն, պատրաստի գիտելիքներ մատուցելուն, իսկ վերջին տարիներին՝ ավարտական քննություններին նախապատրաստելիս, նաև նյութի մեխանիկական սերտմանը՝ «քարացած», «փակ» վիճակում թողնելով սովորողների մտածողությունը, կասեցնելով նրանց՝ դատողություններ անելու ունակությունն ու երևակայական մտքի թռիչքը:

Կրթության ոլորտում առկա հիմնահարցերի լուծմանն է նպատակաուղղված ուսումնական աշխատանքի՝ վերջերս լայն հնչեղություն ստացած եղանակների և ձևերի վերանայման պահանջը: Կրթական բարեփոխումների նպատակով ուսում-

նական գործունեության տարաբնույթ տեսակների կիրառումը լայն հեռանկարներ է բացում աշակերտի մտածողության և ստեղծագործական կարողությունների զարգացման համար: Հատկապես խմբային գործունեության ծավալման ընթացքում ի հայտ են գալիս աշակերտի անհատական նախասիրությունների դրսևորման և ազատ գործելու հնարավորությունները, սովորողների մեջ մեծանում է ճանաչողական ակտիվությունը, որոնելու նախանձախնդրությունը, աշխատանքի վերջում շոշափելի արդյունքների հասնելու ձգտումը, ինչն անվերապահորեն բերում է նախ՝ աշակերտի մտածողական կարողությունների զարգացմանը, և ապա՝ որոնողական աշխատանքների ամփոփման միջոցով հանգեցնում է այդ ամենը բանավոր կամ գրավոր խոսքով արտահայտելու ունակության ձևավորմանը:

Պրոֆեսոր Ս. Գյուլբուղայանը, խոսելով լեզվի ուսուցման ընթացքում աշակերտի դատողական կարողությունների զարգացման մասին, նկատել է, որ «մտածողությունն ու լեզուն անխզելիորեն կապված են իրար հետ, չկա լեզու առանց մտածողության ու մտածողություն առանց լեզվի»<sup>1</sup>: Ուստի միանգամայն օրինաչափ է հանրակրթության առաջին իսկ օղակից կրտսեր դպրոցականներին մայրենի լեզվի ընթերցանության և քերականական տարրական իրողությունների համատեղ ուսուցումը: Ըստ որում՝ լեզվական այդ պարզագույն իրողությունների յուրացման գործընթացում մշակվում են այնպիսի մեթոդական հնարներ, որոնք առավելագույնս կարող են նպաստել սովորողների խոսքային գործունեության ծավալման կարողության կատարելագործմանը և նրանց լեզվամտածողության զարգացմանը: Մեր օրերի հայտնի մեթոդիստ Ջ. Գյուլամիրյանի կարծիքով՝ «վերը նշված խնդիրները կլուծվեն միայն այն դեպքում, երբ ընտրված ուսուցման մեթոդների և երեխայի զարգացման առանձնահատկությունների միջև գոյություն ունեցող կապերն ուսուցիչը հաշվի առնի դասի գործընթացում, որոշի այն օրինաչափությունները, որոնք ընկած են մայրենի լեզվի ուսուցման գործընթացի հիմքում»<sup>2</sup>:

ՀՀ նոր կրթակարգի համաձայն՝ հանրակրթական դպրոցի շրջանավարտի նկարագրում ի թիվս այլ բնութագրական որակների՝ նշվում է նաև նրա հետազոտական աշխատանք կատարելու կարողությունների առկայությունը: Այդ կարողության ձևավորումը իրականացվում է երեք փուլով՝

ա) նախնական կամ նախապատրաստական փուլում (2-6-րդ դասարաններ) առաջադրվում է ինքնուրույն աշխատանք ձեռնարկելու համար գործնական հմտությունների ձևավորման խնդիրը,

բ) զարգացման կամ փորձարարական փուլում (7-8-րդ դասարաններ) խնդիր է դրվում զարգացնել սովորողի՝ սեփական փորձով ինքնուրույնաբար գի-

<sup>1</sup> Ս. Գյուլբուղայան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1987, էջ 43:

<sup>2</sup> Ջ. Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006, էջ 186:

տելիքներ ձեռք բերելու կարողություններ,

գ) ավարտական փուլում (10-12-րդ դասարաններ) ակնկալվում է սովորողի ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու կարողության դրսևորումը<sup>1</sup>:

Այսինքն՝ աշակերտների՝ հետազոտական աշխատանք կատարելու ունակությունները ձևավորվում և զարգացվում են աստիճանաբար: Սկզբնական փուլում այդ ուղղությամբ ծավալվող աշխատանքները իրացվում են դասարանական աշխատանքի շրջանակներում, ուսուցչի անմիջական մասնակցությամբ և խորհրդատվությամբ: Իսկ հետագայում աշակերտի հետազոտական-որոնողական գործունեությունը կարող է իրացվել նաև արտադասարանական աշխատանքների ժամանակ, երբ սովորողները ուսուցչի ուղղորդմամբ ծավալում են պլանավորված գործունեություն՝ ողջ ընթացքում դրսևորելով ինքնակազմակերպման, ինքնավերահսկման որակներ:

Հետազոտական-որոնողական գործունեության ծավալման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է սովորողների՝ *սուբյեկտ* կարգավիճակով: Սա նշանակում է, որ ուսումնական գործունեության դաշտում կենտրոնական դերը աշակերտին է, իր ծավալած ուսումնասիրություններում ինքն է նախաձեռնություն հանդես բերողը: Այս դեպքում խթանված են նրա ակտիվությունը, երևակայությունն ու հայտնագործությունների անելու ձգտումը. աշակերտ – սուբյեկտն ինքն է որոշում՝ ինչ գիտի, ինչ պետք է իմանա, ինչու այդ պիտի իմանա և կարողանում է իր առջև դրված այս կամ այն ուսումնական խնդրի լուծման համար քայլեր մշակել ու դրանք իրականացնել:

Այսպիսի հարցադրումները, որոնք աշակերտը դնում է իր առջև և փորձում է գտնել դրանց պատասխանները, նրան մղում են մտածելու, պրպտելու, ելքերի տարբերակներ (վարկածներ) առաջ քաշելու և փորձելու, թե դրանցից որն է իրեն պետք, կամ որն է ճիշտ: Այս որոշումներն էլ կրտսեր դպրոցականին մղում են գիտության մեջ փոքրիկ «փորձությունների» գնալու: Դրանք, ըստ էության, հետազոտական գործունեության ճանապարհ անցնելու պարզ փորձեր են, որոնք նաև նպաստում են քերականական գիտելիքների և կարողությունների գիտակցական ձեռքբերմանը, դրանց՝ խոսքային գործունեության ծավալման համար անհրաժեշտ հմտությունների վերածմանը:

Այս գործընթացում էական ենք համարում ոչ թե հետազոտություն կատարելու բուն փաստը կամ երևույթը, այլ այն բազմաբովանդակ գործունեությունը, որը ծավալում է աշակերտը, և այն կարողությունները, որոնք ձեռք են բերվում այդ գործունեության ժամանակ: Այդպիսին են, օրինակ, դիտարկվող ուսումնական

<sup>1</sup> Տե՛ս՝ Հայոց լեզու և գրականություն, Ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների ուսումնական նյութերի փաթեթ, Երևան, 2006, էջ 43:

խնդիրը ոչ միայն առանձին մանրամասներով, այլև ամբողջության մեջ տեսնելու, այդ կապակցությամբ պարզ վարկածներ առաջ քաշելու և դրանք ձևակերպելու, դիտումներ կատարելու, արդյունքներն ամփոփելու ու մտահանգումներ կատարելու, ուսումնասիրվող նյութը դասակարգելու, սեփական գաղափարներն ապացուցելու և պաշտպանելու ունակությունները: Սրանք այնպիսի կարևոր ունակություններ են, առանց որոնց աշակերտը չի կարող արդյունավետ ուսումնական գործունեություն ծավալել ինչպես ուսուցման առաջին փուլում, այնպես էլ՝ հետագա փուլերում (միջին և ավագ դպրոցներ): Այսինքն՝ հետազոտական աշխատանքի գործընթացը երեխաների մեջ ձևավորում է ակտիվ մտածողական գործունեություն ծավալելու ունակություն և զարգացնում է նրանց՝ պրպտելու, ուսումնասիրելու, իրենց հետաքրքրող լեզվական երևույթների մեջ խորանալու ունակությունները: Օրինակ՝ նախադասության գլխավոր անդամների կարևորության մեջ համոզվելու համար մենք աշակերտներին առաջարկում ենք կատարել փոքրիկ «հետազոտություն»:

– Եկե՛ք՝ մտածենք՝ ինչ կլինի, եթե նախադասությունը ենթակա կամ ստորոգյալ չունենա:

Գրատախտակին գրում ենք աշակերտների կազմած նախադասությունները: Ապա հանձնարարում ենք որոշել ենթական և ստորոգյալը: Հետո կաշուն թղթերով աշակերտները նախ ծածկում են բոլոր ենթակաները և կարդում նախադասությունները: Մեր՝ «ի՞նչ կատարվեց» հարցին աշակերտները տալիս են տարբեր պատասխաններ, որոնք հիմնականում այսպիսին էին. «Հայտնի չէ, թե ով տնկեց ծառերը», «Ո՞վ է օգնում մայրիկին», «Ի՞նչը մտավ սարերի ետևը» և այլն: Նույն ձևով ծածկում ենք ստորոգյալները: Այս անգամ աշակերտները հարցեր են տալիս ստորոգյալի վերաբերյալ: Արդյունքում՝ նրանք ոչ միայն համոզվում են, որ, իրոք, առանց ենթակայի և ստորոգյալի նախադասությունն ամփոփ միտք չի կարող արտահայտել, այլև կրկնում են նախադասության գլխավոր անդամներին տրվող հարցերը:

*Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա* բաժնում ղեկավարած արտադրական պրակտիկայի ընթացքում դրված գիտափորձը ևս հաստատում է, որ լեզվական իրողությունների ուսումնասիրման գործընթացում հետաքրքրաշարժ փորձարարությունը երեխաների մեջ մայրենի լեզվի նկատմամբ ուշագրավ գործունեություն ծավալելու ցանկություն է առաջացնում. սովորողներն այդ դեպքում անընդհատ ցանկանում են «փորփրել» լեզուն, թափանցել նրա գաղտնիքների մեջ, ինքնուրույն հայտնաբերել լեզվական մատչելի օրինաչափությունները և ակնհայտ բացառությունները:

Սա, անշուշտ, չի նշանակում, որ այդ կարողությունների ձևավորման ուղղու-

թյամբ աշխատանքները մենք իրականացնում ենք միայն լեզվական իրողությունների ուսումնասիրման ժամանակ: Չէ՞ որ կրտսեր դպրոցում մայրենի լեզվի քերականությունն ուսումնասիրվում է ընթերցանության նյութերի (գեղարվեստական խոսքի) հիման վրա (համակցված դասի կառուցվածքով), մայրենիի դասի ընթացքում: Դասի այն հատվածը, որի ժամանակ պիտի անդրադառնալ քերականությանը, որոշում է ուսուցիչը՝ հիմք ընդունելով բազմաթիվ հանգամանքներ: Այսինքն՝ ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման և զարգացման ուղղությամբ աշխատանքներն իրականացվում են մայրենիի դասի և՛ ընթերցանության, և՛ խոսքի զարգացման, և՛ քերականության փուլերում:

Չետազոտական-որոնողական աշխատանք իրականացնելու տարրական կարողության ձևավորման ուղղությամբ աշխատանքները սկսում ենք իրականացնել քայլ առ քայլ՝ սկսած լեզվական նախագիտելիքների ուսուցման փուլից: Այդ նպատակով մշակել, փորձարկել ու ամբողջացրել ենք վարժությունների մի համակարգ, որի կատարումը նպաստում է մի կողմից նոր նյութի յուրացմանը, ամրակայմանը և կիրառմանը, մյուս կողմից՝ սովորողներն այդ ճանապարհն անցնում են՝ ծավալելով որոնողական-հետազոտական պարզ գործունեություն: Այդ ճանապարհն անցնելիս, ինչպես վերն ասացինք, աշակերտները մտածողական գործողության արդյունքում «հայտնագործություններ» են անում, դրանց հիման վրա ձևավորում են իրենց կարծիքը ուսումնասիրվող երևույթի մասին, սովորում են այն ներկայացնել կապակցված խոսքով, ձեռք են բերում միևնույն երևույթին այլ տեսանկյունից, նաև՝ այլոց տեսանկյունից նայելու, դրանց հակադրվելու կամ համակարծիք լինելը հիմնավորելու ունակություններ: Մեթոդիկայում ընդունված և ուսուցման պրակտիկայում փորձարկված ու արդյունավետության տեսանկյունով հիմնավորված այս մեթոդը, որը կոչվում է էվրիստիկ, սովորողների մտածողության ակտիվացման, գիտելիքների ձեռքբերման գործընթացի գիտակցականացման ամենարդյունավետ մեթոդն է:

Այսպիսի կարևոր ունակությունների ձևավորման գործընթացը մենք իրականացնում ենք՝ սկսելով սովորողներին հաճելի և մատչելի հետաքրքրաշարժ առաջադրանքների կատարումից: Դրանք ուսուցման առաջին փուլում միտված են հայերեն մտածելու, մտածածը (միտքը) պարզ, շարահյուսորեն ճիշտ նախադասություններով ներկայացնելու, այդ նախադասությունների խումբը տեքստ դարձնելու, տեքստի մեջ մտնող նախադասությունների շարահյուսական և տրամաբանական կապերը ճիշտ ներկայացնելու կարողությունների ձևավորմանը:

Ներկայացնենք նման վարժությունների համակարգային նկարագիրը:

ա) Երեխաների լեզվամտածողությունն ու երևակայությունը զարգացնելու,

«իրենց այլոց տեղն դնելու», նրանց մտածածը հասկանալու՝ նրանց «մաշկի մեջ մտնելու» և խոսքով այս ամենը ներկայացնելու ունակությունների ձևավորման նպատակով իրականացնում ենք այսպիսի վարժություններ:

### **Առաջադրանք 1**

Պատկերացրեք, որ դուք շինարար եք և պետք է կամուրջ կառուցեք: Ներկայացրեք՝ ինչ աշխատանք պիտի իրականացնեք, ինչպիսի քայլերով եք այն սկսելու և ավարտելու: Հիմնավորե՛ք ձեր ընտրությունը:

### **Առաջադրանք 2**

Աչքերը փակեք և երևակայեք, որ դուք երկնքում շարժվող ամպեր եք: Վերևից նայեք երկրին (օրինակ՝ ձեր բակին, դպրոցին, փողոցին, մարզական հրապարակին, անտառին, ծաղիկներին, հավերի ֆերմային և այլն): Դուք ամպեր եք, բայց կարող եք տեսնել, մտածել և մտածածն արտահայտել խոսքով: Աչքերը փակեք, պատկերացրե՛ք՝ ինչ եք տեսնում, ինչ նկատեցիք, ինչ եք մտածում և այդ ամենի մասին պատմեք:

Գրատախտակին գրվում է հարցաշարը, հարցաշարի յուրաքանչյուր հարցի դիմաց գրվում են այն հենակետային բառերը, որոնք պիտի աշակերտները գործածեն հարցերին պատասխանելիս: Աշակերտները ներկայացնում են իրենց աշխատանքն առանձին-առանձին, իսկ դասարանը լսում է և քննարկում յուրաքանչյուրի նյութը:

Նման խաղ-վարժությունների կատարման արդյունքում աշակերտները նաև սովորում են առարկաներին, երևույթներին և վերջապես աշխարհին նայել ուրիշի աչքերով, գնահատել իրավիճակը, դեպքերը և այդ ամենը ներկայացնել շարահյուսորեն ճիշտ կապակցված խոսքով, այսինքն, գործնականում կիրառել այն, ինչ սովորել են շարահյուսությունից տեսականորեն:

Այս վարժությունների համակարգի կատարումից հետո աշակերտներին տված մեր առաջադրանքները նպաստում են որոնողական-փորձարարական ինքնուրույն աշխատանքների և այդ ընթացքում ստացված արդյունքների հիման վրա խոսք կառուցելու, դիտարկումներն ու մտահանգումները ծանոթ շարահյուսական կառույցներով ներկայացնելու ունակությունների ձևավորմանը:

Վերը նշված առաջադրանքները կրտսեր դպրոցի ցածր դասարաններում երեխաները կատարում են բանավոր, իսկ երրորդ և չորրորդ դասարաններում բանավոր պատմածի հիման վրա կարելի է գրել փոքրիկ շարադրություններ, որոնք, ըստ էության, դառնում են փոքրածավալ պատմություններ: Նշենք, որ կրտսեր դպրոցականները երևակայական «հետազոտությունների» արդյունքում շարադրում են բավականին ուշագրավ, հետաքրքիր և զվարճալի մտքեր: Այդ մտքերի շարադրման գործընթացում ձևավորվում և զարգանում են «ուսումնասի-

րությունների» արդյունքները գրավոր կամ բանավոր խոսքով ներկայացնելու, վերլուծելու ունակություններ, որոնք ամրակայուն են նաև շարահյուսորեն ճիշտ կառուցվածք ունեցող խոսք հյուսելու երեխաների կարողությունը: Օրինակ՝ վերը տրված թիվ 1 առաջադրանքի կատարումից առաջ աշակերտներին համծնարարեցինք նախ նկարել այն կամուրջը, որն իրենք պիտի կառուցեն: Ստացվեցին շատ հետաքրքիր նկարներ, որոնք ներկայացնում են կամուրջ կառուցելու համար երեխաների կատարած քայլերի հաջորդականությունը: Այդ հաջորդականությամբ էլ նրանք ներկայացրին իրենց փոքրիկ պատումները: Փաստորեն, նկարելու միջոցով երեխաները պլանավորեցին իրենց խոսքը և արդյունքում հյուսեցին այսպիսի պատմություններ (երեխաները պատմությունները հյուսելիս օգտագործում էին իրենց նկարած նյութերը):

Առաջադրանք 1-ի շուրջ Վանաձորի թիվ 4 հիմնական դպրոցի III դասարանցիների հյուսած բանավոր պատմություններից: (Ներկայացնում ենք առանց փոխությունների):

Ա.Ղ.

*«Ես շինարար եմ: Ես պիտի կամուրջ կառուցեմ: Ինձ հարկավոր է քար և ցեխ: Նախ քարերը կշարեն, ցեխ կքսեն: Որպեսզի կամուրջն ամուր լինի, շատ ցեխ կգործածեն: Երբ կամուրջը շարեն, ես կամուրջի կողքերին երկաթից ճաղեր կկպցնեմ, որ մեքենաները չընկնեն ջուրը»:*

Լ.Մ.

*«Կամուրջը կառուցելուց առաջ ես այն նկարեցի, որ նայեմ նկարին, նոր աշխատեմ: Ես գետի մի ափից մյուսը զցեցի երկաթյա կամուրջ, հետո նոր կամուրջը ծածկեցի քարով ու ցեխով: Կամրջի աջ և ձախ կողմերում ճանապարհ թողեցի, որ մարդիկ քայլեն այդտեղով: Կամուրջի վրա ես լույսեր եմ դրել, որ գիշերը լուսավոր լինի»:*

Այսպիսով՝ փոքրածավալ կապակցված խոսք կառուցելու կարողության ձևավորման համար աշակերտները ոչ միայն շարահյուսական նյութի ուսումնասիրման ժամանակ որոշակի գիտելիքներ ու կարողություններ ձեռք բերեցին, այլև երևակայական խաղերի միջոցով սովորեցին խոսք կառուցել՝ կատարելով մեր կողմից նախապես մշակված քայլերը:

I քայլ - պատկերացնել այն, ինչի մասին պիտի խոսել.

II քայլ - նկարել պատկերացրածը.

III քայլ - պատմել ըստ նկարի.

Ըստ էության, աշակերտներն այսպիսով խոսք կառուցելու համար կատարեցին 3 պարզ և մատչելի քայլերից կազմված որոնողական աշխատանք:

բ) Շարահյուսական տարրական գիտելիքների ամրակայմանն ու կիրառմանը նպաստում են նաև անավարտ մտքերն ամբողջացնելու ուղղությամբ իրական-

նացվող վարժությունները, որոնք ևս աշակերտներին նպատակաուղղում են պարզ որոնողական – վերլուծական աշխատանքների: Այս կարգի վարժությունները երեխաների մեջ մշակում են դեպքերի ընթացքը կռահելու, ձեռնարկած գործողությունների ավարտը կանխատեսելու կամ ավարտից ելնելով՝ *ի՞նչ էր եղել*-ը գուշակելու և խոսքով ներկայացնելու կարողություններ:

Ստորև բերված վարժությունների կատարման նպատակը ոչ միայն շարահյուսորեն ճիշտ և նոր խոսք կառուցելու կարողության ձևավորումն է, այլև որոնողական – կռահման գործունեություն ծավալելու ունակությունների հիմնադրումը: Տալիս ենք այսպիսի առաջադրանքներ.

### **Առաջադրանք 1**

#### **Փոքրիկ պատմություն հյուսիր, որն ավարտվի այսպիսի վերջաբանով.**

... և այսպես մենք չկարողացանք ճամփորդության մեկնել:

... իսկ ուսուցչուհին արցունքոտ աչքերով փաթաթվեց իր աշակերտներին:

... բայց մայր սազն այլևս չէր լսում:

### **Առաջադրանք 2**

#### **Յյուսիր մի պատմություն, որն սկսվի այսպես.**

• Մի արևոտ օր մենք հավաքվեցինք դպրոցի բակում: Մեկս բահ էինք բերել, մեկս՝ դուլլով ջուր: Տղաները ծառերի տնկիներ էին բերել, իսկ աղջիկները՝ ծաղիկների սածիլներ...

• Երեխաները սահում էին փոքրիկ բլրակի վրա: Արմենն ու Անին սահակով էին սահում, իսկ Գոռը՝ չմուշկներով: Մարոն տխուր կանգնած էր...

### **Առաջադրանք 3**

#### **Ամբողջացրու՝ պատմությունը՝ հյուսելով նրա կենտրոնական մասը:**

• Մայրիկը հիվանդ էր: Տանը ոչ ոք չկար: Հանկարծ Սոնան զգաց, որ մայրիկի ջերմությունը գնալով բարձրանում է: Նա մտածեց ու որոշեց ...

Երբ երեկոյան ընտանիքը հավաքվեց, մայրիկն իրեն արդեն լավ էր զգում:

Այս և նման այլ առաջադրանքներ կատարելու համար երեխաները պիտի ունենան բարդ նախադասություններն ամբողջացնելու, ապա՝ դրանք մեկ հիմնական մտքի շուրջ հավաքելու, բարդ շարահյուսական կառույցներ ստեղծելով՝ մտքեր արտահայտելու ունակություններ, որոնք վարժությունների կատարման ընթացքին զուգահեռ՝ կկատարելագործվեն: Լեզվական այս գործողությունները կատարելու ճանապարհին աշակերտները, բնականաբար, քայլ առ քայլ պիտի անցնեն վարկածներ կառուցելու գործընթացին:

Հայտնի է, որ վարկածն ի սկզբանե ո՛չ ճշմարտություն է, ո՛չ էլ հերքում: Այն դեռևս չապացուցված տեսակետ է՝ ենթադրություն, որը պիտի ապացուցվի: Բավական է աշակերտներին ներկայացնել վիճահարույց հարցադրումներ, նրանց



մղել դրանց պատասխանները որոնելու, որպեսզի խոսք կառուցելու ճանապարհին որոնումներ կատարեն:

Դեռևս նախադպրոցական տարիքից երեխաներն ունեն երևակայելու, ամենատարբեր, հաճախ անիրական կամ անիրականանալի ենթադրություններ անելու կարողություններ: Նրանք հաճախ են ենթադրություններ կառուցում այն մասին, թե իրենք ինչ են տեսնում (կամ նույնիսկ՝ չտեսածի մասին), ինչ են լսում (նույնիսկ՝ չլսածի մասին) կամ զգում:

Ենթադրություններ պարունակող նախադասությունների կառուցման կարողությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ հետազոտական, ստեղծագործական մտածողության արդյունք: Եվ այսպես՝ վարժությունների հաջորդ խումբը.

– Եկե՛ք որոշենք և պատասխանենք հարցերին:

- Ի՞նչ կարող էր լինել , եթե հանկարծ անձրև չգար:
- Ինչպե՞ս է տմից շատ հեռու կորած շունը գտնում իր տան ճանապարհը:
- Ի՞նչ կլինի, եթե կատուներն ուտեն բոլոր մկներին:
- Ի՞նչ կպատահեր, եթե աշխարհում բոլորը ծույլ լինեին:
- Ինչ կլիներ, եթե մենք այբուբեն չունենայինք:
- Իսկ եթե հանկարծ ծովերն ու գետերը ցամաքեին:
- Ինչի՞ համար է արևը և այլն:

Այսպիսով՝ որոնողական-հետազոտական գործունեության ծավալումը սովորողի մտածողության զարգացման, խոսք կառուցելու կարողության հիմնասյունն է: Հետևաբար, մեր աշխատանքի ընթացքում, սկսած դպրոցական առաջին օրերից, մեծ տեղ պետք է տալ աշակերտների ինքնուրույն մտածելու, դատողություններ անելու կարողություններին, տեղծագործական երևակայության զարգացմանը՝ ակնկալելով, որ նրանք անվերապահորեն կձգտեն խոսել, պատմել երևակայածի մասին: Այս դեպքում աշակերտները լինում են համարձակ, անկաշկանդ, սխալվելը նրանց չի մտահոգում, որովհետև այնքան ոգևորված են, որ մոռանում են, որ դաս է, իսկ իրենք ուսուցչի հանձնարարությունն են կատարում:

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Գյուլամիրյան, Ջ. Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006:
2. Գյուլբուդադյան Ա., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1987:
3. Հայոց լեզու և գրականություն, Ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների ուսումնական նյութերի փաթեթ, Երևան, 2006:

**ОСУЩЕСТВЛЕНИЕ ПОИСКОВО-ИССЛЕДОВАТЕЛЬСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ  
КАК СРЕДСТВА РАЗВИТИЯ МЫШЛЕНИЯ И РЕЧИ У МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ****ЕДОЯН А. Р.****РЕЗЮМЕ**

Работу над развитием поисково-исследовательских умений ученика предлагается начать с младшего школьного возраста. Планируемые поэтапные речевые и практические упражнения создают серьезные предпосылки для развития как мыслительных, так и речевых навыков учащихся.

**THE REALIZATION OF SEARCH AND INVESTIGATION ACTIVITY AS A MEANS OF  
DEVELOPING THINKING AND SPEECH OF A JUNIOR STUDENT****YEDOYAN A.****SUMMARY**

The studies carried out for the development of search and investigation abilities of the pupil are supposed to begin at a junior stage.

The verbal and practical drills which are planned and carried out step by step form serious preconditions for the development of both thinking and speech.